«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը

<<Կենսաբանություն>> առարկայի դասավանդման ընթացքում»

ՀԵՂԻՆԱԿ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՌԱՐԿԱ՝ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 1

ԳԼՈՒԽ 1.ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1.1. Ի՞նչ է «արժեհամակարգը»: Արժեհամակարգի ձևավորման կարևորությունը հանրակրթության բնագավառում ----------3

ԳԼՈՒԽ 2.ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

2.1. Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոնները -------5

2.2 Սովորողների արժեքների ձևավորմանն ուղղված ուսումնական գործունեության տեսակներ, դասավանդման արդյունավետ մեթոդներ ---------6

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ: ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

3.1.Սովորողի արժեհամակարգի ձևավորումը կենսաբանության դասաժամերին ----------10

3.2. Ուսուցման դաստիարակչական ներգործությունը սովորողների անձի և արժեքային համակարգի ձևավորման վրա ----------12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեք» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը երեխայի մեջ: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ, ըստ առավել ընդունված ընկալման, մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Անձի ձևավորումը տեղի է ունենում արտաքին և ներքին մի շարք պամանների ազդեցության պայմաններում, և այդ ազդեցությունների արդյունքում կամ հետևանքով փոխվում է երեխայի վերաբերմունքը աշխարհի, հասարակության, բնության, շրջապատի և ինքն իր հադեպ: Եվ այս մեծ և հիմնային փոփոխությունները մեծ մասամբ կատարվում են աստիճանաբար դպրոցական տարիների ընթացքում:

Հենց սրանով էլ պայմանավորված է թեմայի <u>արդիականությունը,</u> քանի որ արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման, անձի ճիշտ զարգացման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:

Այս աշխատանքի <u>նպատակն</u> է ներկայացնել, թե ինչ դերակատարում ունի հանրակրթությունը երեխայի արժեհամակարգի ձևավորման և զարգացման մեջ, և ընդգծել կենսաբանություն առարկայի կարևորությունը արժեքային համակարգի ձևավորման գործում:

Այս նպատակից բխում են հետևյալ <u>խնդիրները՝</u>

- Ներկայացնել, թե ինչ է «արժեհամակարգը»,
- Կարևորել արժեհամակարգի ձևավորման նշանակությունը հանրակրթության բնագավառում,

- Թվարկել սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններն ու ներկայացնել դրանց ազդեցությունները,
- Կարևորել ուսուցման դաստիարակչական ներգործությունը սովորողների անձի և արժեքային համակարգի ձևավորման վրա,
- Ներկայացնել սովորողների արժեքային համակարգի ձևավորումը կենսաբանություն առարկայի կոնտեքստում:

Նպատակը՝

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտի մոտ ձևավորել աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով:

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. 1. Ի՞նչ է «արժեհամակարգը»: Արժեհամակարգի ձևավորման կարևորությունը հանրակրթության բնագավառում

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների

ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:

Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով:

Այս բոլոր ներգործությունները հաշվի առնելով՝ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա ե՛ւ ցավ, ե՛ւ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

ԳԼՈՒԽ 2.ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

2.1. Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոնները

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»: [Սուխոմլինսկի 1977: 22]

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն:

Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»: [Սուխոմլինսկի 1977: 22]

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:

2.2 Սովորողների արժեքների ձևավորմանն ուղղված ուսումնական գործունեության տեսակներ, դասավանդման արդյունավետ մեթոդներ

Դասավանդման գործընթացում ժողովրդավարական մշակույթի արժեքները և վերաբերմունքը, հմտություններն ու գիտելիքները և դրանց քննադատական ընկալումը, զարգացնող ուսումնադաստիարակչական աշխատանքները կախված են լինելու այն

հանգամանքից, թե ուսուցիչներն ինչքանով են լավ կազմակերպում և պլանավորում ուսումնական աշխատանքները՝ հարմարեցնելով դրանք իրենց և իրենց աշակերտների կարիքներին:

Հարգելի ուսուցիչներ, այս ամենը ճիշտ կազմակերպելու և դասապրոցեսում ժողովրդական մշակույթի կարողունակությունները արդյունավետ կերպով կիրառելու համար անհրաժեշտ է, որպեսզի դուք կազմակերպեք ձեր գործունեությունը՝ հաշվի առնելով ստորև ներկայացված հարցադրումները.

1. Ի՞նչ եք կարծում, ձեր դասավանդումը որքանո՞վ է նպաստում, որ սովորողները դառնան ակտիվ քաղաքացիներ և հարգեն մարդու իրավունքները:
2. Որքա՞ն հաճախ են ձեր աշակերտներն ունենում իրենց սեփական մտքերն արտահայտելու, տարբեր տեսակետներ լսելու, դրանց տարբերությունները դասարանում քննարկելու հնարավորություն:
3. Որքա՞ն հաճախ են ձեր դասավանդած դասարանում հարցեր բարձրացվում մարդու իրավունքների, ժողովրդավարության, քաղաքացիության, արդարության, հավասարության կամ իրավունքի գերակայության վերաբերյալ:
4. Ձեր ներկայիս աշխատակերպը ինչպե՞ս է նպաստում սովորողի մտավոր, անձնային և սոցիալական ռեսուրսների զարգացմանը, որոնք նրան թույլ կտան դրսևորել իրեն՝ որպես ակտիվ քաղաքացի:
5. Ինչպե՞ս եք դուք հնարավորություն տալիս սովորողներին՝ աշխատելու միմյանց հետ և ամրապնդելու իրենց իմացությունը, ինչպես նաև գործնականում կիրառելու իրենց սոցիալական հմտությունները՝ այս կերպ խթանելով նաև անհատական և սոցիալական գործընթացներն ու վերջնարդյունքները:
6. Ի՞նչ հաճախականությամբ եք դուք գործնական աշխատանքներ ու փորձարարական մոտեցումներ կիրառում:

7. Արդյո՞ք դուք արդյունավետությամբ եք բերում սովորողի նախկին փորձը ձեր դասավանդման դաշտ:

Ահա այս հարցերի պատասխանը կօգնի ձեզ հասկանալու, թե ինչպես կազմակերպել ուսումնական գործընթացները:

Ժողովրդական մշակույթի կարողունակությունների (ԺՄԿ) մասով մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները ոգևորում են սովորողներին: Ուսուցիչները՝ որպես ուսումնառության առաջնորդներ, խիստ անհրաժեշտ է, որպեսզի պլանավորեն կրթական աշխատանքներն այնպես, որ ներառեն հետևյալ հնարավորությունները.

Փորձառություն: Հարգալից և անաչառ մոտեցումները, ինչպես նաև ապրումակցումը զարգացնելու հարմար եղանակ է փորձառության միջոցով

սովորելու հնարավորությունների ընձեռումը, որը կարող է լինել կա՛մ իրական, կա՛մ երևակայական: Սովորողները կարողանում են ՝ խաղերի, վարժությունների, ավանդական մեդիայի և սոցիալական ցանցերի, դեմառդեմ շփումների կամ հաղորդակցության միջոցով զգալ այս վերաբերմունքները: Ուսուցիչները կարող են գրքեր ընտրել իրենց աշակերտների համար կամ կազմակերպել նրանց շփումը համայնքի, այլ թաղամասերի, տարածաշրջանների և երկրների հետ՝ ֆիզիկապես կամ առցանց համատեքստերում:

Նրանք կարող են միջոցառումներ և միջազգային հանդիպումներ կազմակերպել երիտասարդների հետ: Օրինակ՝ պատմության ուսուցիչները կարող են ծրագրերի թատերական վերարտադրություններ կամ միջոցառումներ կազմակերպել, որոնք կզարգացնեն բազմահեռանկար մոտեցումները:

Համեմատում/համեմատություն: Սովորողները հաճախ համեմատում են անծանոթ երևույթը՝ ծանոթի հետ, և անծանոթ երևույթները որակում են որպես «խայտառակություն», «ավելի վատ» կամ «ոչ քաղաքակիրթ»: Հարկ է, որ ուսուցիչները տեղյակ լինեն արժեքների այսօրինակ համեմատությանը և այն փոխարինեն **«համեմատում՝ հանուն իմացության»** մոտեցմամբ, ինչը ենթադրում է

ցնմանություններն ու տարբերություններն առանց գնահատական տալու տեսնելն ու դիմացինի տեսակետը ընդունելը:

Վերլուծություն: Նմանությունների և տարբերությունների հետևում դրված են առանձին մտքերի, արժեքների և համոզմունքների բացատրությունները: Ուսուցիչները կարող են օժանդակել սովորողներին, որպեսզի վերջիններս վերլուծեն այն ամենն, ինչ կարող է ընկած լինել այլոց արածի ու ասածի մեջ և նրանց տեսածի հիմքում:

Մտազննում (կամ հետահայաց վերլուծություն): Համեմատումը, վերլուծությունն ու փորձառությունը պետք է ուղեկցվեն մտազննման/ հետահայաց վերլուծությամբ ու քննական իմացությունն ու ընկալումը զարգացնելու համար տրված ժամանակով և տարածությամբ: Օրինակ՝ ուսուցիչները կարող են սովորողներին խնդրել քննարկել իրենց փորձառությունը, խրախուսել սովորողներին՝ ունենալ իրենց ուսանածի վերաբերյալ գրանցատետր, և գրել, նկարել, կիսվել կամ այլ կերպ արձագանքել իրենց սովորածին: Ծնողները ևս կարող են անաղմուկ նստել իրենց երեխաների հետ և խոսել նրանց փորձառության մասին:

Գործողություն: Մտազննումը կարող է և պետք է հիմք դառնա գործողություն ձեռնարկելու, մյուսների հետ երկխոսության մեջ մտնելու և մյուսների հետ համագործակցային աշխատանքների մասնակցելու համար: Ուսուցիչները կարող են ստանձնել խրախուսելու, նույնիսկ համագործակցային գործողությունը կառավարելու պատասխանատվություն, օրինակ՝ «համադպրոցական» մոտեցումների կամ դպրոցական գործընկերությունների միջոցով բարելավել սոցիալական և ֆիզիկական միջավայրը:

Սովորողների յուրացրած արժեքների, վերաբերմունքների և հմտությունների վրա մեծ ազդեցություն է ունենում այն ձևը, որով ուսուցիչները հաղորդակցվում և շփվում են աշակերտների հետ: Ժողովրդավարական արժեքները, մոտեցումներն ու հմտությունները հնարավոր չէ յուրացնել միայն ժողովրդավարության մասին ֆորմալ դասավանդմամբ, այլ հարկ է նաև գործնականում կիրառել դրանք

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ: ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

3.1. Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը կենսաբանության դասաժամերին

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք ասել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Հանրակրթական յուրաքանչյուր առարկա յուրովի և տարբեր անկյուններից է ազդում սովորողների աշխարհայացքի, անձի և արժեքային համակարգի ձևավորման վրա: Այդ առարկաների շարքում իրենց առանձնահատուկ տեղն ունեն բնական գիտությունները՝ մասնավորապես՝ կենսաբանությունը: Կենսաբանության դասընթացը նպատակ է հետապնդում դաստիարակել կենսաբանական և էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձ, որը գիտակցի կյանքի, որպես Երկրի վրա բարձրագույն արժեքի, նշանակությունը և կարողանա բնության հետ իր հարաբերությունները կառուցել կյանքի, մարդու և շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքի հիման վրա, լինի հասարակության և ինքն իր հետ ներդաշնակ: [«Կենսաբանություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2008]

Հանրակրթական դպրոցում «Կենսաբանություն» առարկայի ուսուցումը, որպես միջնակարգ կրթության պարտադիր բաղադրիչներից մեկը, նպատակ է հետապնդում ապահովել բնության և կենդանի օրգանիզմների մասին սովորողների գիտելիքների ձեռքբերումը, դրանց ճանաչողության մեթոդների տիրապետումը, հմտությունների և կարողությունների, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորումը: [«Կենսաբանություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2008]

Կենսաբանության ուսումնասիրման շրջանակում մեծ տեղ է գրավում էկոլոգիական և բնագիտական դաստիարակությունը սովորողների արժեքային համակարգում: Քանի որ բնագիտական առարկաները կյանքին համընթաց շարժվում են առաջ, նախկին դասավանդման մեթոդները դառնում են անհամապատասխան:
Նախկինում, երբ սովորեցնում էինք բնության (կենդանի և անկենդան)բաղադրիչների առանձնահատկությունները, կենդանիների և բույսերի արտաքին և ներքին կառուցվածքը, կենդանիների և բույսերի կենսակերպը, խնամքը, ապա այսօր, կախված այն բանից, որ մարդկային հասարակությունը և բնությունը կարծես թե պայքանրի մեջ են (մարդն ավելի շատ է ուզում վերցնել բնությունից), անհրաժեշտություն է առաջացել դասավանդման և արժեքային համակարգի ձևավորման մեթոդների վերանայում:

Կցանկանայինք նշել, որ էկոլոգիական դաստիարակությունը պետք է սկսվի նախադպրոցական տարիքից: Երեխաների մոտ պետք է ձևավորել էկոլոգիական գիտակցություն՝ տալով նրանց բնության մասին գիտելիքներ առօրյա կյանքում, բնության գրկում, դասերի և էքսկուրսիաների միջոցով: Երեխան պետք է տեղեկացված լինի և գիտակցի, որ ինքը բնության միայն մի մասնիկն է, ծագել է բնությունից, իրեն ստեղծողն ու օրրանն է: Այս գիտակցությունը ձևավորելու շնորհիվ՝ նա կունենա դրական վերաբերմունք կենդանի բնության նկատմամբ, կարժևորի իր սեփական և մերձավորների առողջությունը: Իմանալով իր ծագման (բնությունից) և զարգացման (էվոլյուցիա) մասին, նա կհետևի իր սննդակարգին, ֆիզիկական ակտիվությանը, կստեղծի հարմոնիկ կապ այն միջավայրի հետ, որտեղ ապրում է: Սովորողը չի հակադրվի այդ թեկուզ և փոքր բնական միջավայրին՝ գալով դեպի առողջ ապրելակերպի եզրահանգմանը:

Լինելով տեղեկացված բնության երևույթների օրինաչափությունների մասին՝ երեխան կարժևորի բնության մեջ և շրջակա միջավայրում վարքի կանոնների պահպանումը՝ չլինելով միայն սպառողի դերում:

Հարկ է առանձնահատուկ նշել երեխայի էկոլոգիական իմացությունները այն վայրի մասին, որտեղ ապրում է (գյուղ, քաղաք, մարզ, հայրենիք), որի շնորհիվ կարժևորի և կդրսևորի հոգատար վերաբերմունք կենսաբանական օբյեկտների, բնության, հուշարձանների, անհետացող բույսերի և կենդանիների նկատմամբ: Իսկ այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է երեխային մասնակից դարձնել բնության պահպանման միջոցառումներին:

3.2. Ուսուցման դաստիարակչական ներգործությունը սովորողների անձի և արժեքային համակարգի ձևավորման վրա

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ

առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը» [Бабанского, Нойнера 1978:
59]:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը,

մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: [Корчак, 1979: 65]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը կատարելիս մեզ հաջողվեց իրականացնել հետևյալ գործընթացները՝

- Ներկայացնել, թե ինչ է «արժեհամակարգը»,
- Կարևորել արժեհամակարգի ձևավորման նշանակությունը հանրակրթության բնագավառում,
- Թվարկել սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններն ու ներկայացնել դրանց ազդեցությունները,
- Կարևորել ուսուցման դաստիարակչական ներգործությունը սովորողների անձի և արժեքային համակարգի ձևավորման վրա,
- Ներկայացնել սովորողների արժեքային համակարգի ձևավորումը կենսաբանության դասաժամերին:

Այս ամենը մեզ թույլ տվեց հանգելու հետևյալ եզրակացություններին՝

- Ընդունեցինք, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար,
- Համոզվեցինք, որ հանրակրթության բնագավառում առանձնահատուկ կարևորություն ունի երեխայի արժեքային համակարգի ձևավորումը,
- Պարզեցինք, որ երեխայի անձի ձևավորման, արժեքային համակարգի զարգացման, աշխարհայացքի հղկման վրա մեծապես ազդող գործոններից են ավանդական, տարիքային գործոնները և միջանձնային հարաբերությունները,
- Հասկացանք, որ ուսուցման գործընթացում առանցքային դեր ունի ոչ միայն աշակերտներին գիտելիքներով զինելը, այլև նրանց արժեքային համակարգի ձևավորումը և զարգացումը՝ կարևորելով ուսուցման դաստիարակչական կողմը,

- Համոզվեցինք, որ սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում մեծապես կարևորվում են հանրակրթական բոլոր առարկաները,
- Հասկացանք, որ ինչպես կենսաբանության մեջ կյանքի էվոլյուցիան, այնպես էլ երեխայի արժեհամակարգը փոխվում են կյանքին համընթաց,
- Այսպիսով, երեխայի արժեհամակարգի ձևավորումը անհրաժեշտ է սկսել նախադպրոցական տարիքից՝ շեշտադրելով երեխայի հարգանք ու հոգատար վերաբերմունքը էկոլոգիայի, սեփական առողջության, իր օրգանիզմի նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթական հիմնական դպրոցի «Կենսաբանություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր», Երևան, ԾԻԳ. 2008
2. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ
3. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с

Էլեկտրոնային ռեսուրսներ

1. Արամ Փախչանյան «Դպրոցը, արժեքները եւ տարատեսակ «ազատությունները» https://mediamax.am/am/column/12925/ 21.09.2022; 22:30
2. Իննա Փարեմուզյան «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում» https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf 22.09.2022; 14:07